ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

25.11.2025թ.

Դիմում

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդում ընդգրկվելու մասին

Խնդրում եմ ինձ հնարավորության դեպքում ընդգրկել ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Գործունեության ոլորտ՝ գինեգործություն, խաղողագործություն
Գործունեության հասցե 1՝ Վայոց Ձորի մարզ, գ. Արտաբույնք, 2-րդ փ., տուն 42
Գործունեության հասցե 2՝ Ք. Երևան, Վաղարշյան 18/18
Էլ. հասցե՝ info@maran.am, nwcarmenia@gmail.com
Հեռ. ՝ 091401342, 091061342

Հարգանքով,

«Մարան» ՍՊԸ տնօրեն և «Գինու ազգային կենտրոն» ՀԿ նախագահ

Ավագ Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային քաղվածք: Բեռնվել է՝ 2025-11-25-ին, www.e-register.am կայքից:

«ՄԱՐԱՆ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Գրանցման համար	**65.110.00005**
Հիմնադրման տարի	**1992**
Գրանցման ամսաթիվ	**1994-07-25**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Ստեղծման եղանակ	**Հիմնադիր(ներ)ի որոշում**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**16080248**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**08901556**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**35110005**
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	**ԱԹԱՐԲԵԿՅԱՆ / Տ / 22 ԵՂԵԳՆԱՁՈՐ 3601 ԵՂԵԳՆԱՁՈՐ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	--

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	**ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿԻ**
Անձնագրային տվյալներ	**BA3605861 2021-08-13 012**
Հասցե	**ԱԼԻԽԱՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ Փ. / Շ / 2 / 214 ԱՋԱՓՆՅԱԿ 0036 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Էլ. փոստ	-

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ) **գրառված չեն**

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **4000000**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	Բաժնեմասի նկատմամբ գրավի կամ արգելանքի մասին տեղեկություններ
ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿԻ Անձնագիր հ/հ BA3605861 2021-08-13 տրվ. 012 ի կողմից ՀԾՀ 3810590109 Հասցե՝ ԱԼԻԽԱՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ Փ. / Շ / 2 / 214 ԱՋԱՓՆՅԱԿ 0036 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	1994-07-25	100 %	4000000	գրառված չեն

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
1999-04-21	**Գործունեության փոփոխություն** **Կանոնադրական կապիտալի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**
2004-06-08	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2008-01-14	**Սեփականության վկայագրի տրամադրում**
2008-01-23	**Մասնակիցների փոփոխություն** **Բաժնեմասերի փոփոխություն մասնակիցների գրանցամատյանում** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2012-02-03	**Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում** **Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում**
2012-02-13	**Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2012-05-11	**Կանոնադրության թվայնացում**
2015-03-06	**Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում**
2015-06-24	**Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում**
2015-07-23	**Մասնակիցների տվյալների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2018-10-15	**Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
	Մասնակիցների փոփոխություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

2020-10-26	**Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2022-09-20	**Մասնակիցների տվյալների փոփոխություն** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**
2023-02-06	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2024-02-08	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2025-02-18	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**

Կազմված է «22» հոկտեմբերի 2020 թ.
Բաղկացած է 2 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՄԱՐԱՆ»
սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի
2020 թ. Հոկտեմբեր 22 -ի թիվ 1
որոշմամբ

Տնօրեն
Ավագ Հարությունյան
(անուն, ազգանուն)

«22» հոկտեմբերի 2020 թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 25.07.1994 թ.
գրանցման համար՝ 65.110.00005
ՀՎՀՀ՝ 08901556
21.04.1999 թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
26.10.2020 թ.

աշխատակից՝

«ՄԱՐԱՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

2020 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1."Մարան"սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման/ պետական գրանցման / և դադարում է լուծարման ավարտի/ լուծարման մասին պետական գրանցամատյանում գրառման/ պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվամբ կլոր կնիք / հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով/, դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ նշաններ ու ֆիրմային այլ ռեկվիզիտներ:

1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի 1991թ. մարտի 5-ի թիվ 162 որոշմամբ հաստատված բաժնետիրական ընկերությունների և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով / այսուհետ՝ Օրենսգիրք /, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.7. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ "ՄԱՐԱՆ" Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
կրճատ՝ "ՄԱՐԱՆ " ՍՊԸ
ռուսերեն լրիվ՝"MAPAH" Общество с Ограниченной Ответственностью
կրճատ՝ "MAPAH" OOO
անգլերեն լրիվ՝ "MARAN" Limited Liability Company
կրճատ՝ "MARAN" Co. Ltd

1.9 .Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝
Հ.Հ. ք. Եղեգնաձոր, փ. Աթարբեկյան 22

2.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության գործունեության նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2 .Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- ոգելից խմիչքների արտադրություն/ լիցենզիայի դեպքում /

- խաղողի, հատապտուղների, պտուղների կամ ընկույզների այդ նույն վայրում ըմպելիքների արտադրության համար անհրաժեշտ կուլտուրաների աճեցում
- մրգերի և բանջարեղենների վերամշակում և պահածոյացում
- կենցաղային ապրանքների մանրածախ և մեծածախ առևտուր
- առևտրարդյունաբերական սարքավորումների և գյուղատնտեսական օժանդակ նյութերի առևտուր
- տուրիզմ
- արտադրատեխնիկական նշանակության անշարժ գույքի առք ու վաճառքի և վարձով տալու միջնորդ ծառայություններ

2.1. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի / հատուկ թույլտվություն / առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ, նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ չի կարող զբաղվել, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այդ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այլ գործողություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.4. Ընկերությունն իր արտադրանքը, ինչպես նաև ձեռք բերած ապրանքները և մթերքները իրացնելու նպատակով կարող է ունենալ շարժական անշարժ առևտրական կետեր Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

2.5. Նշված բոլոր աշխատանքները և ծառայությունները Ընկերությունը կատարում է պայմանագրային կարգով, եթե գործող օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված, ինչպես կանխիկ դրամով, այնպես էլ փոխանցման կարգով, պահպանելով պետականորեն գործող կանոններն կարգը:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ « ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Ընկերությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվու և պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկային հիմնարկություններում ՝ հաշվարկային հաշիվներ / դրամով, տարադրամով /:

3.2. Ընկերությունը կարող է լինել այլ Ընկերության / այդ թվում դուստր և կախյալ / հիմնադիր / մասնակից /, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերում:

3.3 Ընկերությունն իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ / մասնաճյուղեր և ներկայացուցչություններ/, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրության հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

3.4. Ընկերությունն իրավունք ունի.

- Հ.Հ. օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը;
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժութով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր;
- օտարել, վարձակալությամբ տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու;
- օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքների կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և /կամ/ ձեռնակությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձ և /կամ/ ձեռնակություններ և անդամակցել իրավաբանական անձին և /կամ/ ձեռնակություններին;
- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից;

3.5. Ընկերությունը պարտավոր է.

- օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հավապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն;
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ;
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածի պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար;
- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին, այն դեպքում երբ հնարավոր չէ բավարարել պարտապանների օրինական գույքային պահանջները;
- անհապաղ տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան 20 տոկոսը ձեռք բերելու մասին;
- ապահովել Ընկերության փաստաթղթերի /Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրաավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների, տարեկան հաշվետվությունների հաշվապահական

հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը;

- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵԸ

4.1. Ընկերության մասնակիցներ են համարվում այն անձինք, ովքեր նշված են սույն կանոնադրության հավելվածում: Մասնակիցները կարող են փոփոխվել Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

Ընկերությունը չի կարող որպես միակ մասնակից ունենալ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:

4.2.Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը;
- հանդես գալ առաջարկություններով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում;
- Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնետոմսերի ձայների չափով;
- ստանալ Ընկերության գործունեությունից ստեղծվող շահույթի / դիվիդենդի / մասը;
- Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը;
- տեղեկություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ;
- ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերրությունից /անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից/;
- հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով;
- Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր;
- օգտվել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

Ընկերության մասնակիցներն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող կիցբաժնեմասերը /դրանց մասը/ օտարելու կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, այլ անձանց փոխանցելու իրավունք: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնետոմսը նույն գնով ձեռքբերելու նախապատվության իրավունք: Մասնակիցների կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց: Եթե բաժնեմասի օտարումը երրորդ անձանց հնարավոր չէ, իսկ Ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, Ընկերությունը պարտավոր է ձեռք բերել այն և իրացնել՝ այլ

մասնակիցների կամ երրորդ անձանց եռամսյա ժամկետում կամ որոշում ընդունել Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին: Մասնակիցների նախապատվության իրավունքի /այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման/ իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Մասնակիցների նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնեմասերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել ընկերության բոլոր մասնակիցները միաժամանակ: Ընկերության բաժնեմասերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում Ընկերության զուտ ակտիվների մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնեմասերի արժեքը /կամ Ընկերության զուտ ակտիվների մեծությունը/ սահմանվի անկախ գնահատողի /աուդիտորի/ կողմից :

4.3. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

- սույն կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցներիընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ;
- չհրապարակել գաղտնի տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ;
- կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները;
- պահպանել սույն կանոնադրության դրույթները :

4.4. Ընկերությունից դուրս եկող մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

- վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասին համապատասխանող գույքի արժեքը /բնեղենով կամ դրամով /;
- բաժնեմասի կամ գույքի արժեքը որոշվում է դուրս գալու պահին կազմված հաշվեկշռով որոշված Ընկերության զուտ ակտիվների արժեքով;
- եթե մասնակցի կողմից ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա գույքը վերադարձվում է առանց հատուցելու մաշվածությունը;
- մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը:

4.5. Ընկերության կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված կարգով սահմանված ժամկետում ներդրումներ չկատարող մասնակիցը պարտավոր է ուշացման համար վճարել չմուծված գումարի 10% -ի չափով տուգանք / ավանդներ ներդնելու պարտականությունը խախտելու համար/ : Սահմանված ժամկետից 3 ամսվա ընթացքում գումարը չմուծելու դեպքում մասնակիցը վտարվում է Ընկերությունից, կամ համապատասխան չափով պակասեցվում է կանոնադրական կապիտալը:

4.6. Այն մասնակիցը, որը սույն կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունները չի կատարվում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում կամ իր գործողություններով խոչընդոտում է Ընկերության նպատակներին հասնելուն, կարող է հեռացվել Ընկերությունից՝ մասնակիցների միաձայն որոշմամբ:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԿԱՊԻՏԱԼՆԵՐՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

5.1.Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝

- այն գույքի, որը մասնակիցները որպես փայատիրական վճարումներ կամ այլ պայմանավորվածությամբ նրան են հանձնել,
- Ընկերության տնտեսական գործունեության հետևանքով արտադրած արտադրանքի,
- ստացված եկամուտների,

- գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքի:

Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ , սահմանվում են միայն օրենքներով :

5.2. Ընկերության մասնակցի ներդրումը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ այլ գուքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

Ներդրվող գույքի արժեքը որոշվում է Ընկերության հիմնադիրների / մասնակիցների / միջև համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման / աուդիտի / :

Կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը գնահատվում է տեղական արժույթով:

5.3. Եթե գույքը, նյութական որժեքները, ֆինանսական և այլ ռեսուրսները փոխանցվում են Ընկերությանը միայն օգտագործման նպատակով, ապա ներդրման չափը և համապատասխանաբար մասնակից- վարձատուի բաժնեմասը որոշվում է ելնելով այդ գույքի օգտագործման դիմաց տրվող վարձակալական վճարից:

Ընկերությունը ժամանակավոր օգտագործման տրված գույքի պատահական կորստի կամ վնասման ռիսկը դրվում է գույքը փոխանցած մասնակցի վրա:

5.4. Ընկերությունում ստեղծվում է պահուստային / ապահովագրական / կապիտալ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Այս կապիտալի ձևավորումը իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով մինչև նախատեսված չափերին հասնելը: Պահուստային կապիտալ կատարվող մասհանումների չափը սահմանվում է մաքուր շահույթի 5%-ից պակաս: Պահուստային կապիտալի միջոցների ծախսման կարգը որոշվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

5.5. Սահմանված կարգով առաջացող մաքուր շահույթի բաշխումը Ընկերության մասնակիցների միջև իրականացվում է կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 4.000.000 / չորս միլիոն / դրամ, որը բաժանված է 4000 բաժնեմասերի, մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող փոքր լինել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով սահմանված չափից:

Ընկերության բոլոր 4000 բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասերի քանակը / բաժնեմասը / բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:

6.2. Ներդրված գույքի արժեքի փոփոխությունը և կանոնադրական կապիտալում մասնակիցների կողմից կատարված լրացուցիչ ներդրումները չեն ազդում յուրաքանչյուր մասնակցի ունեցած բաժնեմասի վրա, եթե սահմանված կարգով համապատասխան փոփոխություններ չեն մտցվել սույն կանոնադրությունում:
6.3. Իր ներդրումն ամբողջությամբ կատարած Ընկերության մասնակցին տրվում է վկայական, որը չի դասվում որժեթղթերի կարգին:
6.4. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերն օտարել սույն կանոնադրության 4.2. կետի վերջին մասով սահմանված կարգով:
6.5. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն Ընկերության մնացած մասնակիցների միաձայն համաձայնությամբ: Ընդ որում, բաժնեմասն անցնելու համար համաձայնություն չտալու, ինչպես նաև ժառանգի / իրավահաջորդի / բաժնեմասից հրաժարվելու դեպքում դրա որժեքի վճարումը կատարվում է սույն կանոնադրության 4.4. կետում սահմանված կարգով:
6.6. Ընկերությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:

Կանոնադրական կապիտալի մեծացում կարելի է միայն այն բանից հետո, երբ բոլոր մասնակիցները կատարել են իրենց ներդրումները:

Ընկերության կանոնադրական կապիտալի մեծացումը կարող է կատարվել.

- Ընկերության գույքի հաշվին

Ընկերության մասնակիցների լրացուցիչ ներդրումների հաշվին:

- երրորդ անձանց ներդրումների հաշվին:

Ընկերության մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ներդրումների հաշվին կանոնադրական կապիտալի մեծացման մասին որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, որով որոշվում է լրացուցիչ ներդրումների գումորային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները: Սահմանված ժամկետի ավարտից հետո Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել / ձայների որակյալ մեծամասնությամբ/ ներդրումների հաշվին ձևավորված կանոնադրական կապիտալի և դրա հետ կապված սույն կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

Եթե երրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազումը: թե Ընկերության նշված ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի՝ օրենքով սահմանված նվազագույն չափից, Ընկերությունը ենթակա է լուծարման:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը թույլատրվում է նրա բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Վերջիններս այդ դեպքում իրավունք ունեն պահանջել վաղաժամկետ կատարելու կամ դադարացնելու Ընկերության համապատասխան պարտավորությունները և հատուցելու վնասները:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների փոքրացմամբ /կամ / Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարմամբ:

Կանոնադրական կապիտալի մեծացման կամ փոքրացման ամսին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխության պետական գրանցման պահից:

6.7.Ըստ Ընկերության պարտավորությունների, չի թույլատրվում նրա կողմից բոնուսանձում կատարել մասնակցի փայի նկատմամբ: Մասնակցի պարտքերը մարելու համար, նրա ունեցվածքի անբավարարության դեպքում վարկատուներն իրավունք ունեն սույն կանոնադրության 4.4 կետում սահմանված կարգով պահանջել պարտքատուի փայի առանձնացում:

7.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների /կամ նրանց լիազոր ներկայացուցիչների / ընդհանուր ժողովն է, որն ունի ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Կոլեկտիվ մասնակիցներից Ընկերության ընդհանուր ժողովին մասնակցում է մեկ ներկայացուցիչ:Կոլեկտիվ մասնակիցների ներկայացուցիչները կարող են նշանակվել ժամանակավորապես կամ մշտական: Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխարինելու իր լիազոր ներկայացուցչին՝ այդ մսին տեղյակ պահելով մյուս մասնակիցներին:Մասնակիցն իրավունք ունի իր լիազորությունները փոխանցել այլ մասնակցի կամ այլ մասնակցի ներկայացուցչի: Մասնակիցներն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակություն:

Այդ դեպքում, երբ ընդհանուր ժողովի որոշմամբ շոշափվում են Ընկերության միայն մեկ անդամի շահերը, մասնավորապես Ընկերությունից մասնակցի վտարման հարցը քննարկելիս, այդ մասնակիցը կամ նրա լիազոր ներկայացուցիչը քվեարկությանը չի մասնակցում:

Ընկերության ընդհանուր ժողովն ընտրում է իր նախագահին:

7.2. Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն է պատկանում.

1) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
2) մասնակցի ազատումը և նոր մասնակցի ընդունումը, այդ թվում մասնակցի ժառանգներին / իրավահաջորդներին / բաժնեմասի փոխանցման միջոցով,
3) մասնակցի կողմից օտարվող բաժնեմասների ձեռքբերումը և դրանց իրացումը սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում
4) մասնակցի հեռացումը / վտարումը / սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքում,
5) Ընկերության վերակազմակերպումը,
6) Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
7) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի մեծացումը,
8) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոքրացումը,
9) ավանդների գանձման մասին որոշման ընդունումը,
10) դուստր և կախյալ ընկերությունների հիմնադրումը,
11) Ընկերության տնօրենի / գլխավոր տնօրենի, գործադիր տնօրենի / նշանակումը , նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
12) Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի անդամների / վերստուգողի / ընտրությունը և նրանց /նրա / լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
13) Ընկե ության առդիտն իրականացնող անձի հաստատումը,
14) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես

նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,

15) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների ոնոշումը,

16) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված գործարքներին /այդ թվում՝ այլ տնտեսական ընկերակցություններին և ընկերություններին մասնակցելը / հավանություն տալը, որոնց արժեքը գերազանցում է կանոնադրական կապիտալի 1/4ը,

17) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադրեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

18) Ընկերության և նրա ղեկավարության դեմ դատական գործընթացներում Ընկերությունը ներկայացնեու որոշման ընդունումը,

19) ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

7.3 Ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում կամ հարցման միջոցով: Այդ դեպքում որոշման նախագիծը ուղարկվում է մասնակիցերին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Հարցման միջոցով հարցը համարվում է ընդունված բոլոր մասնակիցների համաձայնության դեպքում: Հակառակ դեպքում գումարվում է ընդհանուր ժողովի նիստ:

Ժողովը համարվում է իրավասու, եթե ներկա են ընդհանուր ձայների 60% ունեցող մասնակիցները / նրանց ներկայացուցիչները /: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում /երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը / ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների / նրանց ներկայացուցիչների / ներկայության դեպքում:

Սույն կանոնադրության 7.2. կետի 1, 8 , 11 և 16 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ջողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, 14 և 15 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների որակյալ մեծամասնությամբ, 2, 4, 5 և 6 ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, իսկ մնացած հարցերի շուրջ ժողովին մասնակցողների ձայների պարզ մեծամասնությամբ:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն / առանց ձայնի իրավունքի / տնօրենը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները կամ վերստուգողը, աուդիտն իրականացնող անձը:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի պահանջելու հարցերի քննարկում ժողովում, այն պայմանով, որ այն ներկայացված լինի նիստը սկսվելուց առնվազն 25 օր առաջ:

Ընդհանուր ժողովի նախագահը կազմակերպում է արձանագրության վարումը: Արձանագրությունների գիրքը ցանկացած ժամանակ պետք է ներկայացվի մասնակիցներին: Նրանց պահանջով արձանագրությունների գրքից տրվում են հաստատված քաղվածքներ:

7.4. Ընդհանուր ժողովները գումարվում են ոչ պակաս, քան տարին 2 անգամ: Արտահերթ նիստեր գումարվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահի կողմից, կանոնադրությունում նշված հանգամանքների

առկայության դեպքում, գործադիր մարմնի կամ վերստուգիչ հանձնաժողովի / վերստուգողի / որոշմամբ՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների 20%-ից ավելին ունեցողների կողմից՝ ցանկացած հարցի կապակցությամբ: Եթե 20 օրվա ընթացքում նախագահը չի գումարում նիստ, ապա վերջիններս իրավունք ունեն իրենք գումարելու այն:

7.5. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարությունն իրականացնում է տնօրենը:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի մասնակիցների բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Տնօրենը կազմակերպում է ընննդհանուր ժողովի որոշումների կատարումը , հաշվետու է ընդհանուր ժողովին և իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնել:

Տնօրենն իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Ընկերության անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում կանոնադրական կապիտալի 25%-ից:

Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության հիմնադիրների /մասնակիցների/ պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը, անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

7.6. Ընկերության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

- առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,
- տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական ռեսուրսները,
- կնքում է պայմանագրեր՝ այդ թվում աշխատանքային,
- տալիս է լիազորագրեր,
- բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
- հաստատում է հաստիքներ,

իրականացնում է ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

7.7. Տնօրենի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է վերստուգիչ հանձնաժողովը, որը ստեղծվում է մասնակիցների կողմից, իրենց կազմից և Ընկերության աշխատանքային կոլեկտիվի ահդամներից այն քանակությամբ, որը սահմանված է ընդհանուր ժողովի կողմից:

Տնօրենը չի կարող լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

Վերստուգումը կատարվում է ոչ պակաս, քան տարին 1 անգամ՝ ընդհանուր ժողովի պահանջով կամ վերստուգիչ հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ: Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի Ընկերության պաշտոնատար անձանցից պահանջելու իրեն ներկայացնել բոլոր անհրաժեշտ նյութերը, անձնական բացատրությունները:

Ընկերության հաշվապահական հաշվառումն ու հաշվետվությունը կատարվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

Ընկերության գործունեության ֆինանսա-տնտեսական վերստուգումը կարող է կատարվել աուդիտորական ծառայությունների կամ Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի միջոցով: Վերսստուգման արդյունքները քննարկվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում, որի առջև հանձնաժողոովը հաշվետու է:

Վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում, Ընկերության 3 անդամներից / նախագահ, հանձնաժողովի երկու անդամներ / երեք տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է

Ընկերության ամենամյա հաշվետվությունը, դրամարկղը և կայքը : Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող ընտրվել Ընկերության ապարատում պաշտոններ կրող անձինք:

Ընկերության ֆինանսական և տնտեսական գործունության ստուգումն իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան, ՀՀ ֆինանսական և այլ լիազորված մարմինների, հսկողական ծառայությունների կողմից իրենց իրավասության սահմաններում: Ընկերությունը պարտավոր է ֆինանսատնտեսական գործունեության ստուգում կատարել ոչ ուշ,քան տարին մեկ անգամ:

Վերստուգիչ հանձնաժողովը ստուգումների արդյունքը ուղարկում է Ընկերության ընդհանուր ժողով: Վերստուգիչ հանձնաժողովը ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից: Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է պահանջել գումարելու արտահերթ նիստ, եթե գտնում է, որ Ընկերության շահերին էական սպառնալիք է առաջացել:

Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Ընկերությունն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Ընկերության նկերության կամ նրա մասնակիցների հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչի՝ աուդիտորի / արտաքին աուդիտ /:

Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա մասնկիցներից յուրաքանչյուրի պահանջով: Այս դեպքում վերստուգումը կատարվում է այն պահանջող մասնակցի հաշվին:

Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ վերստուգիչ հանձնաժողովի ֆունկցիաները կարող է իրականացնել վարձատրվող վերստուգողը, որը պետք է հաշվետու լինի միայն ղեկավար մարմնին: Որպես վերստուգող չեն կարող հանդես գալ հիմնադիրները / մասնակիցները / և ղեկավար մարմնի անդամները: Վերստուգողը կարող է միաժամանակ սպասարկել մեկից ավելի իրավաբանական անձանց:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

9.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է մասնակցած մասնակիցների ձայների երեք քառորդով:

Կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ:

9.2. Ընկերության կանոնադրության մեջ կատարված լրացումներ և փոփոխություններ, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար իրավաբանական ուժ են ձեռք բերում

դրանց պետական գրանցման պահից: Սակայն Ընկերությունը և նրա հիմնադիրները / մասնակիցները / նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

10.1. Ընկերությունը, նրա մասնակիցների միաձայն որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Եթե լուծարվող Ընկերության գույքի արժեքը անբավարար է պարտատերերի պահանջը բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով և այլ օրենքներով:

10.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել բաժնետիրական ընկերության:

10.3. Ընկերությունը, այլ իրավաբանական անձի միացման ձևով վերակազմակերպման դեպքերի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծված իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերության այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպելիս, վերակազմակերպված է համարվում Ընկերության գործունեությունը դադրելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից :

10.4. Ընկերության լուծարումը իրականացնում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից նշանակված լուծարման հանձնաժողովը:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները / այդ թվում՝ լուծարման հանձնաճողովի կազմը / ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

Կանոնադրական կապիտալի 10%-ից ավելին ունեցող մասնակիցները դատական կարգով կարող են պահանջել նշանակելու նոր լուծարման հանձնաժողով:

Լուծարման հանձնաժողովը կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները:Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

10.5. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

«ՄԱՐԱՆ» ՍՊԸ կանոնադրության 6.1 կետով սահմանվածը հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՄԱՐԱՆ» ՍՊԸ
կանոնադրության հավելված

«ՄԱՐԱՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

մասնակիցների ցուցակ

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը անձնագրի (գրանցման) տվյալները հասցեն	բաժնեմասերի քանակը	բաժնեմասի չափը %	ստորագրություն
Քաղաքացիությունը ՀՀ Անունը, ազգանունը Ավագ Հարությունյան Սոց. քարտի համարը (առկայության դեպքում) 3810590109 անձնագրի (գրանցման) տվյալները ԲԱ 0099728, 009, 25.01.2014 բնակության (գտնվելու) վայրը ք. Երևան, Մարգարյան նրբ. շենք 2, բն. 214	4000	100	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ըստ 2017-04-25

«ԳԻՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.955603
Հիմնադրման տարի	2017
Գրանցման ամսաթիվ	2017-04-25
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	50430254
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	00165245
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր)	175603
Էլ. փոստ	-
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ՎԱՂԱՐՇ ՎԱՂԱՐՇՅԱՆ / Շ / 18 / 18 Ք. ԵՐԵՎԱՆ 0012 ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	091401342

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	Նախագահ
Անուն Ազգանուն	ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿԻ
Անձնագրային տվյալներ	BA0099728 2014-01-25 009
Հասցե	ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՂ. / Շ / 15 / 33 ՄԵՐՁԱՎԱՆ 1139 ԱՐՄԱՎԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Հասմիկ Զաքարյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **25-04-2017**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ 05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՏՊԱԳՐՎԱԾ Է 2 ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՕՐԻՆԱԿ 1

<<ԳԻՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>>

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

10. 04.2017թ.

Նախագահ_____Ավագ Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

<< 25 >> 04 2017թ.

Գրանցման թիվ 211.171.955603

Հարկ վճարողի հաշվառման համար

00165245

Պետական ռեգիստրի գործակալություն

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« ԳԻՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2017թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1«ԳԻՆՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Գինեգործության զարգացման Հասարակական Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը առանց սահմանափակ անդամությամբ է:

1.3. Կազմակերպությունը, սույն օրենքին համապատասխան, ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակները և ձևերը:

1.4.Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության իման վրա:

2.Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝

1.օրինականությունը.
2. խտրականության բացառումը.
3. բարեխղճությունը.
4. անդամների շահերի ընդհանրությունը.
5. անդամության կամավորությունը.
6. ինքնակառավարումը.
7. հաշվետվողականությունը:

2.1 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

3. Կազմակերպության՝

- հայերեն անվանումն է «Գինու ազգային կենտրոն» գինեգործության զարգացման հասարակական կազմակերպություն
- հայերեն կրճատ անվանումն է՝ ««Գինու ազգային կենտրոն» »
- անգլերեն անվանումն է՝ «National Wine Center» enology promotion Non-governmental organisation
- անգլերեն կրճատ անվանումն է՝ « National Wine Center »
- ռուսերեն անվանումն է՝ «Национальный Центр Вина» Общественная организация по продвижению виноделия
- ռուսերեն կրճատ անվանումն է՝ «Национальный Центр Вина»
- գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վ.Վաղարշյան 18/18
- էլ. փոստն է՝ info@maran.am

4.Կազմակերպության գործունեության առարկան

Կազմակերպության գործունեության առարկան է՝

- Հայաստանի և մյուս պետությունների գինեգործների մասնակցությամբ հանդիպումների, սիմպոզիումների և կոնֆերանսների կազմակերպումը

- գինեգործական առաջավոր ձեռնարկությունների փորձի ընդհանրացումը
- գինիների և մյուս ալկոհոլային խմիչքների մրցույթների և համտեսների կազմակերպումը
- գինիներ արտադրողների և խմիչքների համտեսների վարկանիշային ցուցանիշների կազմումը և հրապարակումը
- գինեգործության և խաղողագործության բնագավառում՝ օրենքով սահմանված կարգով գիտահետազոտական աշխատանքների կատարումը
- գինեգործության, խաղողագործության և հարակից ճյուղերի գործնեությունը կարգավորող իրավական ակտերի և նորմատիվ-տեխնոլոգիական փաստաթղթերի նախագծերի մշակումն ու դրանց անցկացմանն ուղղված քարոզարշավի իրականացումը
- ամուր կապերի ստեղծումը գինեգործության խնդիրներով զբաղվող հասարակական, պետական, կրթական, գիտահետազոտական և այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ
- գինու և խաղողի արտադրության հետ կապված վերապատրաստման դասընթացների կազմակերպումը
- գինեգործության և խաղողագործության խնդիրներին վերաբերվող գրքերի, ուղեցույցների, դասագրքերի, մեթոդական ցուցումների և նմանատիպ այլ նյութերի տպագրում
- օրենքով սահմանված կարգով գինեգործության և խաղողագործության խնդիրները լուսաբանող տպագիր օրգանի հրապարակումը
- օրենքով սահմանված կարգով, դուստր ընկերությունների միջոցով տնտեսական գործունեության իրականացումը
- գինեգործներին նվիրված հոբելյանական հավաքույթների անցկացումը:

5.Կազմակերպության անդամ դառնալու և անդամությունից դուրս գալու կարգը

5.1 Օրենքով սահմանված կարգով Կազմակերպության անդամ կարող է դառնալ հայազգի, ինչպես նաև, 18 տարին լրացած, Հայաստանի Հանրապետությունում բնակվող և օտարերկրյա ցանկացած քաղաքացի, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը և կանոնակարգը:
5.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության Նախագահին, կից ներկայացնելով Խորհրդի կողմից անդամության համար սահմանված համապատասխան փաստաթղթերը:
5.3 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը:
5.4 Կազմակերպության պատվավոր անդամի շնորհման հարցը և ընթացակարգը լուծում է Խորհուրդը:
5.5Կազմակերպության պատվավոր անդամի անդամությունից դուրս գալու իրավունքը պատկանում է տվյալ անձին:

6.Կազմակերպության անդամների իրավունքներն ու պարտականությունները

6.1.Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ներկա լինելու Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նաև լիազորված անձի միջոցով կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին.
2) Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով օգտվելու նրա ծառայություններից.
3) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
4) բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները, նաև դատական կարգով.
5) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.
6) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ գործոններ:

6.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1.պաշտպանել կազմակերպության շահերը և հեղինակությունը
2.բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները
3.կատարել Կազմակերպության կանոնադրության և ղեկավար մարմինների որոշումները:
4.Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր վրա դրված պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ:

7. Կազմակերպության իրավունքները

7.1.Պետական գրանցման պահից Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ և ձեռք է բերում հասարակական կազմակերպությունների համար օրենքով սահմանված բոլոր իրավունքները:

7.2.Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկում՝ ՀՀ և օտարերկրյա արժույթով, կլոր կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում, կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ: Կարող է օրենքով սահմանված կարգով ունենալ իր խորհրդանիշը:

7.3.Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- ինքնուրույն որոշել իր կառուցվածքը, նպատակներն ու գործունեության ձևերը
- տարածել տեղեկատվություն իր գործունեության մասին
- կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

- ներկայացնելու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում
- ձեռք բերել, վարձակալել և օգտագործել օրենքով չարգելված անշարժ և շարժական գույք
- ինքնուրույն կազմավորել և տնօրինել սեփական ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ
- Հայաստանի Հանրապետությունում և այլ երկրներում ստանալ վարկեր և դրամաշնորհներ
- ունենալ առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, կառուցվածքային ստորաբաժանումներ
- համագործակցել ոչ առևտրային կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական, ոչ առևտրային կազմակերպությունների հետ, կնքել համաձայնագրեր, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունն ու իրավաբանական անձի կարգավիճակը
- իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից մասնագետներ:

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

8.1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.
8.2) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.
8.3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Գործակալությանը.
8.4) սույն օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.
8.5) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.
8.6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.

8.7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.
8.8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:
8.9Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

9.1Կազմակերպության կառավարման կարգը

1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը և կազմակերպության վերահսկողությունը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ **Ժողովին**:
2 Ժողովը հրավիրվում է հինգ տարին մեկ անգամ:
3 Կազմակերպության արտահերթ Ժողովը հրավիրում է `գործադիր մարմնի նախաձեռնությամբ, Կազմակերպության անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ ,պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 5 օրացույցային օրվա ընթացքում
4 Եթե կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով Ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

9.2 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են

1) կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.
2) ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.
3) որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին.
4) հաստատելու Կազմակերպության կառուցվածքը.
5) ընտրելու Կազմակերպության գործադիր մարմին՝ Նախագահ , խորհրդի կազմ, նրանց կազմի փոփոխություն կամ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում կայացնել :
7) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները.
8) ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին).
9) առնվազն հինգ տարին մեկ հաստատելու նախագահի կողմից Ժողովի քննարկմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.
10) ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.

11) Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների

կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.3

1) **Կազմակերպության գործադիր մարմինը նախագահն** ,որը ընտրվում է ժողովի կողմից 5 տարին մեկ, ապահովում է Ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը.

2) տնօրինում ցանկացած տեսակի և չափի Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից առանց լիազորագրի.

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում առանց լիազորագրի

4) տալիս է լիազորագրեր.

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները.

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները

9.4

Խորհուրդը՝ ընտրվում է ժողովի կողմից 5 տարի ժամկետով

- կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Ժողովի որոշումների կատարման ընթացքը
- հրավիրում է Կազմակերպության հերթական Ժողովը և նախապատրաստում դրա անցկացումը
- որոշում է կայացնում Ժողովի օրակարգի նախագիծը հաստատելու մասին
- որոշում է Ժողովի անցկացման օրը, պատվիրակների ընտրության կարգը, ընդհանուր թիվը
- որոշում է կայացնում Խորհրդի արտահերթ նիստ գումարելու մասին
- հաստատում է Կազմակերպության Նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը
- առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ
- Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ
- Ընդունում և ազատում է կազմակերպության անդամներին
- Խորհրդի նիստը հրավիրվում է տարին մեկ անգամ, և որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ

1.1 Համաձայն Խորհրդի որոշման Խորհրդի նիստերը կարող են անցկացվել հեռախոսակ:

1.2 Կազմակերպության Նախագահն ի պաշտոնե Խորհրդի Նախագահն է և ղեկավարում է Խորհրդի նիստերը, ներկայացնում առաջարկներ Խորհրդին. Կազմակերպության փոխնախագահ(ներ)ն ընտրվում է (են) Խորհրդի կողմից՝ երկու տարի ժամանակով:

1.3 Փոխնախագահ(ներ)ը համակարգում և ղեկավարում են աշխատանքային գործընթացի կոնկրետ մասերը, որոնց անվանումները և ոլորտային բաժանումները որոշում է Խորհուրդը: Նախագահի բացակայության ժամանակ, լիազորագրով ներկայացնում են Կազմակերպությունը, կատարում են Նախագահի հանձնարարականները, կարող են մասնակցել խորհրդի բոլոր նիստերին:

1.4 Գլխավոր քարտուղարը ընտրվում է Խորհրդի կողմից 2 տարի ժամկետով: Կազմակերպում է Կազմակերպության ողջ գործավարությունը, Կազմակերպության մարմինների նիստերի իրականացումը, տալիս է հանձնարարություններ մշտական և ժամանակավոր աշխատանքային խմբերի պատասխանատուներին:

1.5 Կազմակերպության համապատասխան կառուցվածքային միավորի աշխատանքները համակարգող պատասխանատուների ընտրությունը կատարվում ու հաստատվում են Խորհրդի կողմից երկու տարի ժամկետով:

10. Կազմակերպության գույքը

1. Կազմակերպությունը՝ որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

2. Կազմակերպության գույքը, նրա անդամների միջև չի բաշխվում:

3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Կազմակերպության անդամների ներդրումները.

2) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցները.

3) դրամական մուտքերը պետական բյուջեից.

6) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները.

7) հանգանակությունները.

8) օրենքով չարգելված այլ միջոցներ:

11.Կազմակերպության վերակազմակերպումը, լուծարումը, լուծարման դեպքում գույքի օգտագործումը

8.1Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝օրենքով սահմանված կարգով:

8.2Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:

8.3Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով, և օրենքով նախատեսված կարգով՝ սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

8.4Կազմակերպության լուծարման ավարտին՝ լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո, մնացած գույքը, Ժողովի որոշմամբ՝ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

05